

անձին աղէկը բարակ կլինի, քիչ մը փխրուն, բաւական Թափանցիկ, ախորժափամ ու անուշկեկ: Գործածելու ատեն բաւական է որ քիչ մը ջրով կամ Թէ Թքով Թըջես. անոր համար է որ շրքնասիւնն (¹) ըսինք անունը:

ԿԱՆԹԵՂԻ ԵՂԸ ՄԱՔՐԵԼՈՒ ԳԻՒՐԻՆ ԿԵՐՊ.

Ան հաւասար չափով գայլախազ (չազմազ քա-

շը), ածուխ (foulour), եւ գաճ (ալը), զատ զատ ծեծէ՝ փոշի ըրէ, ու իրարու հետ խառնէ. այն խառնուրդէն անցուր եղը՝ չափաւոր քանակութեամբ, զուտ ու յստակ եղ կլինի:

(¹) Գաղղիարէն colle à bouche, ռուսերէն гудоний клей.

ՅՈՒՆՈՒԱՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Ա.

Կոստանդնուպօլսոյ Յունաց կայսրը Լէոն Գ, սաստիկ սէր ունէր գոհարեղինաց վրայ: Կրսեն Թէ այս Թագաւորը 780 Թուականին սեպտեմբերի 8-ին, որ Աստուածածնայ Ծննդեան տօնին օրն էր, սրբոյն Սովիայ (Այս սօփիա) եկեղեցւոյն մէջ սպտարագին ներկայ եղած ժամանակը՝ կրտսենէ որ խորանին վրայ Թագ մը դրուած է աւանակուռ, այսինքն ազնիւ գոհարեղէններով զարդարուած. ընչաքաղցումենէն աչքը մում կոխած՝ իսկոյն կհրամայէ որ Թագը խորանէն վար առնուն, իրեն բերեն. կառնու գլուխը կընէ ու իւր պալատը կդառնայ: Բայց Թագին ծանրութենէն ճակատին վրայ խոցեր կբացուին, այն խոցերը կգայրանան՝ քաղցկեղի կզարնեն, ու նոյն օրը կմեռնի սեղանակապուտ Թագաւորը:

Բ.

Կրսեն Թէ ատենով Մոնֆիէօրի անունով դերասանը Անդրոնաֆոսի ողբերգութեանը մէջ Ովբեստէս ձեւացած լինելով, սոսկալի ձայնով եւ ուժով ըսեր է այս երեք տողս,

Վասն ոյր իցեն այդ վիշապ որ ըզզըլսովքըղ շրջեն.

Ո՞ւմ զհանդերձանսըղ կազմէ որ ըզկընիդ ձեր խաւին.

Միքէ քարշնլ զիս կամիք իտարտարոսն ահագին (¹):

Այս վերջին հարցմունքը այնպիսի կատաղութեամբ մը կընէ որ երակին մէկը կճամի ու իսկոյն արիւնը կկոխէ կխղզուի:

Գ.

Հին ատենի Արաբացւոց մէջ շատ անուանի էր Համատանի բանաստեղծը, որ Պէսի-իւզ-գէ-մնն կըսուէր, իբր Թէ իւր ժամանակին հրաշալիքը. սա 1007 Թուականին կաթուածով կզարնուի. ուրիշները կարծեն Թէ մեռաւ, կթաղեն: Գերեզմանին մէջ արթննալով՝ Համատանին կըկանչուրուտէ. ձայնը կլսեն, իսկոյն դուրս կհանեն. բայց նա փոքր ինչ ատենէն կմեռնի ու միւսանգամ չարթննար:

(¹) Pour qui sont ces serpents qui sifflent sur vos têtes ?

A qui destinez-vous l'appareil qui vous suit ?

Venez-vous m'entraîner dans l'éternelle nuit ?